

Հաստատված է  
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի  
գիտական խորհրդի 2016թ. հոկտեմբերի 13-ի  
N 1-10/16/4 որոշմամբ

Կարգ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բակալավրիատի ավարտական  
աշխատանքների առաջադրման, հաստատման, ձևավորման և պաշտպանության

## I. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույնով սահմանվում է «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) բակալավրիատի ավարտական աշխատանքների առաջադրման և հաստատման կարգը:
- 1.2. Սույն կարգը նպատակ ունի ապահովել բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց ղեկավարների առաջադրման սկզբունքները:
- 1.3 Սույն կարգը չի տարածվում բակալավրիատում իրականացվող այն ուսումնական ծրագրերի վրա, որոնց ուսումնառությունն ավարտվում է պետական քննությամբ:

## II. Բակալավրիատի ավարտական աշխատանքների թեմաների համար նախատեսված ժամաքանակը և առաջադրումը

- 2.1. Բակալավրիատի ավարտական աշխատանքը կատարվում է ուսումնառության չորրորդ տարվա 2-րդ կիսամյակում: Ավարտական յուրաքանչյուր աշխատանքի ղեկավարման համար ղեկավարին նախատեսվում է 30 ժամ:
- 2.2. Բակալավրիատի ավարտական աշխատանքի թեմաները առաջադրվում են տվյալ մասնագիտության թողարկող ամբիոնների կողմից՝ մինչև չորրորդ տարվա ուսումնառության առաջին կիսամյակի ավարտը:
- 2.3. Ավարտական աշխատանքի թեմաները և դրանց ղեկավարների թեկնածությունները քննարկվում են թողարկող ամբիոնի նիստում և ներկայացվում ֆակուլտետի խորհուրդ՝ մինչև չորրորդ տարվա 2-րդ կիսամյակի փետրվարի 15-ը:
- 2.4. Ֆակուլտետի խորհուրդը առավելագույնը մեկ շաբաթվա ընթացքում քննարկում է ամբիոնների կողմից ներկայացված թեմաները և դրանց ղեկավարների թեկնածությունները և երաշխավորում համալսարանի գիտական խորհրդին՝ այն հաստատելու համար:
- 2.5. Համալսարանի գիտական խորհուրդը ֆակուլտետի որոշումը ստանալուց հետո, առավելագույնը երկշաբաթյա ժամկետում, քննարկում է ներկայացված երաշխավորությունները և ընդունում համապատասխան որոշում:

## III. Բակալավրիատի ավարտական աշխատանքի ձևավորման պահանջները

- 3.1. Բակալավրիատի ավարտական աշխատանքը տպագրվում է A4 (210\*297մմ) չափի թղթի մի կողմի վրա, համակարգչով (Microsoft Word ծրագրով՝ GHEA Grapat կամ Unicod-ի այլ

տառատեսակ), այնպես, որ էջում լինի 28-30 տող: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30մմ, վերևից՝ 20մմ, աջից՝ 10մմ, ներքևից՝ 25մմ:

3.2. Աշխատանքի բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, սեղմագիրը, հավելվածը և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որի վրա համարը չի դրվում:

3.3. Բակալավրիատի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթի վրա աշխատանքի հեղինակը ստորագրում է:

3.4. Բակալավրիատի ավարտական աշխատանքի համար ընդունելի է նվազագույնը 30 էջ ծավալը:

3.5. Աղյուսակների, նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են ներքևում կամ վերևում: Դրանք կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Եթե մեկ թերթի վրա աղյուսակը չի տեղավորվում, պետք է շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով, որ շարունակությունն է: Աղյուսակի սյունակներում ազատ տեղեր չպետք է մնան. պետք է դնել գծիկ կամ գրել «չկա» («չի որոշված»):

3.6. Բակալավրիատի ավարտական աշխատանքի հեղինակը պարտավոր է նշել այն հեղինակներին և աղբյուրները, որոնցից նա փոխառել է առանձին դրույթներ կամ նյութեր:

3.7. Բակալավրիատի ավարտական աշխատանքը կարող է ներկայացված լինել էլեկտրոնային (սլայդ-շոուի) կամ տպագիր պաստառների տեսքով:

3.8. Գրականության ցանկը ներկայացվում է այբբենական կարգով: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի(ների) ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը): Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են դրանց լրիվ տվյալները: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով:


3.9. Բակալավրիատի ավարտական աշխատանքի տիտղոսաթերթը ներկայացված է հավելվածում:

3.10. Բակալավրիատի ավարտական աշխատանքների պաշտպանության համար ըստ մասնագիտությունների կազմավորվում են Պետական քննական հանձնաժողովներ:

### III. Եզրափակիչ դրույթներ

3.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ հաջորդ օրը:

Գիտական խորհրդի նախագահ՝



ստորագրություն Ա.Վ. Թոքմաջյան

Գիտական քարտուղար՝



ստորագրություն Ա.Ա. Առաքեյան

Հավելված

**Շուշիի տեխնոլոգիական համալսարան**

**Բակալավրիատի ավարտական աշխատանք**

Աշխատանքի անվանումը՝ \_\_\_\_\_

Ֆակուլտետ՝ \_\_\_\_\_

Ամբիոն՝ \_\_\_\_\_

Ակադեմիական խումբ \_\_\_\_\_

Աշխատանքի հեղինակ \_\_\_\_\_

/Ազգանուն, անուն, հայրանուն/

Ղեկավար՝ \_\_\_\_\_

Շուշի- 201.. թ.